Պարույր Սևակ

Սպիները

Վերքերն արդեն սպիացել
Ու նշան են միայն դարձել
Անցյալ փառքի ու խոյանքի -
Ա՛յն ամենի, ինչ անցել է,
Ինչ ապրել ու զգացել են
Մեր մարմինը ու մեր հոգին:
Վերքերն արդեն սպիացել,
Ու կսկիծն է նրանց անցել,
Բայց և այնպես բավական է
Օրվա թերթը նորից բացել,
Տեսնել՝ այնտեղ ինչ են գրում
Ատլանտյանի այն ափերից.
Բավական է, որ արկերից,
Ամենակուլ կրակներից,
Պատերազմից, մահից խոսեն.
Բավական է ստվեր մի սև
Մոտենա մեր մաքուր խղճին,
Բավական է մի ցուրտ փչի,-
Սկսվում է սպին նվալ,
Եվ այն կսկիծն է արթնանում,
Որ ստիպում էր մորը լալ,

Գրոհի էր որդուն տանում:
Այն կսկիծը, որ հինգ տարի
Ամեն տան մեջ իմ աշխարհի
Աներևույթ հյուր էր դարձել...
Այդ կսկիծն է վաղուց անցել՝
Մեր վերքերն են սպիացել,
Բայց դարձել են ո՛չ թե միայն
Նրան, որ մեր դեմքի վրա
Անցյալ փառքի ցոլքն է փռում:
Ում որ պետք է՝ թող իմանա՛,
Որ վերքերն այդ սպիացել:
Փակվել են,
բայց...
իբրև բռո՛ւնցք:

22.VIII.1951թ.
Նավչալու